

ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԸ ԳԵՐՄԱՆՆԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՐՆՐԱԿԱՆ
ԲԱՐԴԻ ԴՈՅԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Ի. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Փոխաբերությունը որպես գաղափարների պատկերավոր արտահայտման միջոց տարածված է բոլոր լեզուներում: Այս բնագավառում մենք բախվում ենք միջլեզվական համապատասխանությունների, տիպաբանական զուգահեռների և համաբանական խնդիրների հետ: Ներկայումս բազմաթիվ լեզվաբաններ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում լեզվական հանրությունների նկատմամբ: Նրանք հենվելով տարբեր լեզուներում եղած համանման երկվությունների համեմատության վրա, ձգտում են հայտնաբերել ընդհանուր լեզվաբանական կարգեր, նպատակ ունենալով դրանք դասակարգել ըստ տիպերի: Սակայն ուսումնասիրողների մեծամասնության ուշադրության կենտրոնում կառուցվածքային տիպաբանությունն է, որն զբաղվում է կառուցվածքային հատկանիշների նմանության ուսումնասիրությամբ: Տիպաբանությունն հասկացությունը ծագել է ձևաբանության, այսինքն՝ բառի ձևի նկատմամբ կիրառվելով: Բառի իմաստի նկատմամբ կիրառվող բառիմաստային մակարդակի տիպաբանությունը ամենից քիչ մշակված բնագավառներից է: Նրա հետագա զարգացումից է կախված «պատկերավոր» տիպաբանության հաջողությունը, որի խնդիրները կապված են տարբեր լեզուների ընդհանրական զգծերի, իրականության արտահայտիչ պատկերման ընդհանուր տարրերի և պատկերավորության միջոցների իմաստաբանական նույն կամ նման եղանակավորումների հայտնաբերման ու սահմանման հետ: Փոխաբերական բնույթի իմաստաբանական փոփոխություններն, անկասկած, նույնպես լեզվական հանրությունն են:

Յ. Լ. Բուդագովը¹ իրավացիորեն նշում է, որ լեզուների զուգադրական «փոխաբերականությունը» գրեթե չի ուսումնասիրված: Փոխաբերության բնագավառում նկատվող զուգադրիկությունները, բնականաբար, կարող են բացատրվել նաև եվրոպական լեզուների ծագումնաբանական կապերով և նրանց փոխազդեցությամբ: Այդ մերձավորությունը բացատրող գլխավոր պատճառներից մեկը մարդկային մտածողության նյութական էության մեջ է, որը հոգեբանական և տրամաբանական տեսանկյուններից ենթարկվում է ընդհանուր օրենքների: Մ. Բալլին² առաջ է քաշում «mentale européenne» (եվրոպական մտածելակերպ) հասկացությունը, որի հիմքում ընկած են հնդեվրոպական ժողովուրդների միջև գոյություն ունեցող ինչպես նյութական մշակույթի, այնպես էլ մտածողության բնագավառի բազմաթիվ կապեր: Ըստ այս տեսակետի, խոչընդոտ չի կարող լինել այն հանգամանքը, որ գերմաներենում բարդ բառերը աչքի են ընկնում օգտագործման հաճախականությամբ, իրենց

¹ Փ. Լ. Будагов, Сравнительно-семасиологические исследования. М., 1969, стр. 3, 83—84.

² Մ. Բալլ, Французская стилистика, М., 1961, стр. 4.

կատարած դերի բազմադանությամբ, տարողունակությամբ, մինչդեռ այլ լեզուներում դրանք եզակի դեպքեր են և դառնում են բառաքերականական համակարգի ծայրամասերում: Հենց անհամապատասխանություններն էլ օգնում են պարզելու ամբողջական համակարգերի հարաբերությունը: Վ. Սկալիչկան³ գտնում է, որ տիպաբանության խնդիրն է՝ որոշել, թե ի՞նչն է բոլոր լեզուների համար ընդհանուրը, որո՞նք են լեզվական հանրությունները և, ընդհանրապես, ի՞նչն է յուրահատուկ եզակի լեզուներին:

Բառերի փոխաբերականացումը հատուկ է զարգացման տարբեր աստիճաններում գտնվող բոլոր լեզուներին: Կարելի է նույնիսկ սահմանել պատկերավոր-փոխաբերական բառերի և արտահայտությունների մի շրջանակ, որն ընդհանուր կարող է լինել բոլոր լեզուների կամ նրանց մեծամասնության համար՝ որպես ինքնատիպ «փոխաբերություն-ինտերնացիոնալիզմներ»:

Այս փաստն ապացուցելու համար բավական է բերել մի քանի օրինակներ. Luftschloß („Phantasiegebilde“) առաջ է եկել XVII դ. Luftschlösser bauen, errichten արտահայտությունից, առաջին անգամ Ս. Ֆրանկի մոտ (Sebastian Fränk 1541 „Ein Schloß in den lufft bawen“), ապա՝ Luftschloß 1660, անգլ. to build castles in the air նույնպես XVII դ., ռուս. строить воздушные замки «Օդեղեն դղիակներ կառուցել»: Կարող են լինել նաև նույն արտահայտությունների որոշ ձևափոխումներ, այսպես՝ Ֆրանս. bâtir des châteaux en Espagne, լեհ. budować zamki na lodzie (սառույցի վրա): XVI դ. արդեն համընդհանուր դարձած «կոկորդիլոսի արցունքներ» (Krokodilstranen), բուլղար. крокодилски сълзи, սերբ. крокодилеке сузе և այլն:

Honigmonat—„erste Zeit der Ehe. նաև Flitterwochen, անգլ. honeymoon, Ֆրանս. mois de miel, ռուս. медовый месяц, Schwanenlied, -gesang (letzter Gesang eines Dichters), անգլ. swang-song, Ֆրանս. chant de cygne, լեհ. labedzia piesn. ռուս. лебединая песня:

Feigenblatt աստվածաշնչային «կեղծ դիմակավորում» իմաստով (առաջացել է XVI—XVII դդ., եկեղեցու պահանջով, մերկ մարմինները ծածկելու համար), Ֆրանս. fenille de figuier «թզենու տերև» և fenille de vigne «խազողի տերև» տարբերակը:

Գործածական փոխաբերությունների մի ամբողջ շարք առնվում է բոլոր ժողովուրդների համար ընդհանուր այնպիսի հասկացությունների զուգորդումների հետ, որոնք կապվում են գիշեր, ցերեկ, առավոտ, երեկո, աստղ և նման այլ բառերի հետ: Այստեղ հարկ է նշել որոշ գերմաներեն բառերի յուրահատուկ օգտագործումը փոխաբերական իմաստով՝ Morgenland, Abendland, որը վերաբերում է նաև տնային առօրյա գործածության իրերի անվանումներից շատերին⁴:

Նշանակության այդօրինակ փոխաբերական իմաստափոխությունը, որ նկատվում է շատ լեզուներում, մտածողության որոշակի ձգտումների, հոգեբանական գործոնների, տարբեր լեզվական կոլեկտիվների ստեղծագործական

³ В. Скалчик, К вопросу о типологии. («Вопросы языкознания», 1966, № 4).

⁴ Գերմանացիների և ֆրանսիացիների կողմից նման բառերի փոխաբերական օգտագործման առանձնահատկությունների մասին տե՛ս В андреев, Язык, М., 1937, стр. 196.

Լրեակալության ընդհանրության հետևանք է: Ս. Ուլմանը⁵ նշում է, որ դրանք արդյունք են լեզուների որոշակի խմբերում հանդիպող զուգահեռ զարգացման: Օրինակ. Kran կռունկի հին անվանումն է, ժամանակակից լեզվում՝ Kranich, որը երբեմն օգտագործվում է նաև փոխաբերական իմաստով: XIV դ. կռունկի պարանոցի նմանությամբ, սկսեցին օգտագործել վերամբարձ կռունկի համար, համաբանորեն՝ անգլ. crane, հոլանդ. kraan, որոնք նույնպես նշանակում են «կռունկ», «ամբարձիչ»: Նշված իմաստով այս բառը հիմք է դարձել մի շարք բարդ տերմինների ստեղծման համար: Kranichsschnabel «խորդենի», ինչպես նաև Hahn «չրմուղային ծորակ»: Տակառների ծորակներին սկզբնապես տալիս էին աքաղաղի ձև՝ անգլ. cock «աքաղաղ», ապա՝ ստացավ «ծորակ» իմաստը, իտալ. rubinetto «ծորակ» ֆրանսերենի robinet-ից: Սրա կողքին robin-ը սկզբում եղել է «խոյի» անվանումը (ծորակներին արվում էր խոյի գլխի ձև), Hahnenkücken «ծորակի խցան», Raupe «թրթուր», Raupenschlepper «թրթուրային տրակտոր», ֆրանս. tracteur a'chenilles, անգլ. caterpillar tractor.

Բոլոր լեզուների համար ընդհանուր է (հատկապես բանավոր խոսքում) կենդանիների անունների հարաբերական օգտագործումը մարդու որոշ հատկությունների և վարքագծի նման համար: Սակայն, այստեղ կարող են լինել առանձին բառերի և արտահայտությունների փոխաբերական վերիմաստավորումների անհամապատասխանություններ, որոնք տարբեր լեզուներում տարբեր ձևով են արտահայտվում: Այսպես, օրինակ՝ հնդկական պոեզիայում կնոջ քայլվածքը համեմատվում է փղի քայլվածքի հետ, «փղի քայլք ունեցող» փոխաբերական մակդիրը լայն համարում ունի: Ադրբեջաներենում կնոջ նայվածքը, քայլվածքը համեմատվում է ջելրանի նայվածքի և քայլվածքի հետ, հայերենում՝ մարալի և այլն:

Հակադրության մեթոդի կիրառմամբ պատկերավոր բառային նյութի տիպաբանական համեմատությունը, պատկերավորության միջոցների ձևավորման բնագավառում, երևան է բերում համանման երևույթների զարգացման ընդհանուր ձգտումներ: Հիմնական գործոն կարող է լինել նաև հոգեբանական գործոնների ընդհանրությունը: Այդ երևույթին մեծ ուշադրություն է հատկացնում Ուլմանը, նշելով. «...բանի որ փոխաբերությունը հիմնվում է որոշակի նմանությունների ընկալման վրա, բնական է, որ ակնհայտ համաբանությունները հող են ստեղծում տարբեր լեզուներում միևնույն փոխաբերության առաջացման համար»⁶: Այստեղ հեղինակը մատնանշում է բազմաթիվ պատկերավոր արտահայտությունների լայն տարածումը, որը բացատրվում է նրանց հիմքում ընկած մարդկային փորձից եկող զուգորդումներով:

Նշանակություն ունեն նաև մշակութային պատմական պայմանները և հասարակական-քաղաքական կյանքի նմանությունները, որոնք հանդես են գալիս հատկապես հրապարակախոսության ասպարեզում և մամուլում: Օրինակ՝ Zeitungsente (XIX դ. կեսերից) «կեղծ լուր», ֆրանս. canard (այստեղ փոխաբերական գործածման փաստարկումը պարզ չէ), ռուս. газетная утка; Sauerengurkenzeit «stille Geschäftszeit des Sommers», անգլ. cucumber time, լեհ. ogórkowy sezon, ռուս. мертвый сезон.

⁵ С. У л ь м а н, Семантические универсалии («Новое в лингвистике», вып. V, 1970, стр. 253).

⁶ Նույն տեղում, էջ 244—245.

Գերմաներենում շատ տարածված են «միջազգային» փոխաբերությունները: Մադկլով ընդհանուր աղբյուրներից, մակդիրների նույն բնույթի պատկերավոր համեմատությունների հետ միասին, դրանք ներգրավվել են գեղարվեստական արտահայտչականության համակարգի մեջ, որի առաջացման և դարդացման ուղիները, ժողովրդական լեզվի հիմքի վրա, կախված են կոնկրետ պատմական պայմաններից: Հենց այդ հիմքի վրա էլ հայտնվել են ուղիղ հարաբերությունները և անմիջական փոխառությունները: Շատ փոխաբերություններ ծագել են օտար նմուշների անմիջական ազդեցությամբ՝ որպես յուրատեսակ «բառ-սլաոններ», օրինակ՝ Kanonenfutter «թնդանոթի միս» (Շերպաիլի կողմից ստեղծված «food for powder» է: XVIII դ. վերջերից blue stocking բառն անգլերենի ազդեցությամբ ձեռք է բերել նոր փոխանվանական, փոխաբերական նշանակություն «կապույտ դուլպա»՝ գիտնական կնոջ հեղեղական անվանումը, նույն ձևով է առաջացել ֆրանս. bas bleu, Kannengießer «պոլիտիկան», «անմիտ շատախոս», առաջացել է դանիական դրող Հոլբերգի կատակերգության ազդեցությամբ («Der politische Kannengießer»):

Փոխաբերական հիմքով պատկերավոր գաղափարները կարող են արտահայտվել ոչ միայն բառերով և բառակապակցություններով, այլև նախադասություններով: Դրանք կազմում են բազմաթիվ լեզուներում կրկնվող փոխաբերական մի շարք արտահայտությունների հիմքը, որը հնարավորություն է տալիս ենթադրելու հաղորդակցման որոշակի ոլորտում՝ պատկերավոր ընկալման և հասկացականացման ինչ-որ համամարդկային գծերի գոյություն: Միջազգային փոխաբերական ֆոնդի ձևավորման ընթացքում ոչ պակաս կարևոր դեր են խաղացել նաև ժողովուրդների մշակութային մերձեցումը և փոխադրվածությունը: Մական ոչ միշտ կարելի է տարբերել իսկական զուգահեռ դարգացումը բառապատճենումից: «Լեզուները կարող են պարզապես ընդօրինակել մեկը մյուսին, կամ երկուսով՝ մի երրորդ լեզվի»⁷: Իր այս դրույթն ապացուցելու համար Ուլմանը բերում է միևնույն փոխաբերության օգտագործման օրինակներ տարբեր լեզուներում, որոնք չէին կարող ազգել մեկը մյուսի վրա:

Գերմաներենում հատուկ տեղ են գրավում «միջազգային բառակազմական նմանօրինակները», որոնք հիմնված են իմաստային ընդհանրության վրա և օգտագործվում են փոխաբերական պատճառաբանումով: Հետևելով Վ. Վ. Ակուլենկոյին⁸, բերենք հետևյալ օրինակը՝ ռուս. небоскре́б, անգլ. sky-scraper, քերմ. Wolkenkratzer, հոլանդ. wolkenrabber, դանիերեն skyskraber, չվեդ. skyskrapa, նորվեգ. skyskrapper, ֆրանս. gratteciel, իտալ. grattacielo, հալերեն՝ ամպահերձ և այլն:

Իմաստաբանական տիպաբանության նշանակությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ոճական պատկերավոր հանրույթների տեսակարար կշիռը, այլև նրանց օգտագործման հաճախականությունը, նրանց ավանդը որպես լեզվի պատկերավոր միջոցների համակարգի հարստացման աղբյուր: Զուգահեռ և տարամետ (դիվերգենտ) պրոցեսների հակադրությունների և նրանց արդյունքների նմանության և տարբերության հաշվառման

⁷ Նույն տեղում, էջ 275:

⁸ В. В. Акуленко, Вопросы изучения лексических интернационализмов («Вопросы социальной лингвистики», Л., 1969).

շնորհիվ ավելի հստակ կարելի է որոշել փոխաբերական բարդ բառերի շրջանակը, որը բնորոշ է յուրաքանչյուր լեզվի:

Ընդհանրական փոխաբերություններին զուգընթաց առաջացել և շարունակում են ստեղծվել փոխաբերական բառեր և արտահայտություններ, որոնց մոտ արդեն դրսևորվում են ազգային գծեր: Սրանց մեջ արտացոլվում են այնպիսի երևույթներ, որոնք իրենց համարժեքը չունեն այլ լեզուներում:

Տվյալ պատմական դարաշրջանի ամեն մի ազգային լեզվում գոյություն ունի նրան հատուկ արտահայտչամիջոցների համակարգ, որն իր արմատներով կապված է խոր անցյալի հետ: Այստեղ մենք բախվում ենք հարցերի մի այնպիսի շրջանակի, որոնց լուսաբանումը, նրանց զարգացման յուրահատկության պատճառով, պահանջում է տարածամասնակյա տվյալների հաշվառում: Դրանցից շատերը, հատկապես փոխաբերությունները, աչքի ընկնելով փոփոխման պրոցեսի հարաշարժությամբ և ընդգծվածությամբ, կապված են ժողովրդի կյանքի, կենցաղի ու ավանդույթների հետ: Ժողովրդի կյանքից, նրա նյութական և հոգևոր մշակույթից իմաստաբանական փոփոխությունների կախվածության դրույթը քննվել է Մ. Մ. Պոկրովսկու ուսումնասիրություններում, որը հետևել է Ֆ. Մ. Բուսլանի և Ա. Ա. Շախմատովի տեսակետներին:

Հետաքրքիր է նշել, որ այդպիսի ազգային փոխաբերությունները, չնայած արդեն խամրած պատկերավորությանը, հաճախ պահպանում են իրենց արտահայտչականությունը և կարող են օգտագործվել ժամանակակից լեզվում իբրև տեղային կամ պատմական երանգավորում ստեղծելու միջոցներ: Ներքոհիշյալ օրինակներում, եթե հաշվի առնենք նրանց «տեխնիկական» կողմը, փոխաբերականության տարրը հաճախ փոխարինվում է փոխանվանական իմաստափոխությամբ և բառափոխությամբ: Օրինակ՝ Spießbürger սկզբնապես Bürger, der für Kriegsdienst mit einem Spieße bewaffnet ist, XVII դ. տասնըզական լեզվում արհամարհական անվանում էր, XVIII դ. երկրորդ կեսից ստացավ ժամանակակից նշանակություն՝ «քաղքենի, սահմանափակ հայացքների տեր մարդ», XIX դ. նույնպես Spießer, Spießertum («ուպես կրքահատ ձև»), զուգահեռաբար «քաղքենի, պարզամիտ» իմաստով առաջացավ Schildebürger, Schildebürgerel, ինչպես նաև՝ Philister, որը շնորհիվ Գյոթեի, համազգային լեզվում լայն դործածություն ստացավ: Ուսանողական նույն շրջանակներում ծագեցին և հետագայում համընդհանուր դարձան շատ այլ պատկերավոր փոխաբերական բառեր Pechvogel «ձախորդ», Spiegelstecherei (treiben), Spiegelfechter «երեսպաշտ, խաբեբա» սկզբում կապված էր սուսերամարտի, հայելու առաջ վարժություններ կատարելու հասկացության հետ, XVI դ. դարձավ պատկերավոր արտահայտություն leeres Getue, betrügerische Heuchelei «դատարկ գործեր», «խաբեություն», «կեղծիք», ընդհանրապես «անլուրջ միջոցառումներ»: Sensemann նշանակում էր «հնձվոր», XVII դ. Գերմանիայում մահվան պարը պատկերող հանրաճանաչ նկարների ազդեցությամբ (Totentanzbilder) դարձավ մահվան պատկերավոր փոխաբերական արտահայտություն: Gravinkel տեղանքի անվան հետ է կապված Krähwinkel (Krähwinkelei, Krähwinkel) պատկերավոր փոխաբերական բառի ծագումը, որպես խուլ ծայրամասի խորհրդանիշ՝ Kleinstädterel գրականության մեջ առաջին անգամ հանդիպում ենք Ժան Պոլի մոտ, 1801 թ., հետագայում՝ Հ. Հայնեի մոտ՝ «Harzreise»:

Նման շատ քարդ բառեր զարմացնում են իմաստային երանգների իրենց հադեցվածությամբ, արտահայտչականությամբ, ինչպես, օրինակ՝ Welt-schmerz, Heimweh, Katzenjammer, Lampen-.. Reisetieber: Սրանք հանդիսանում են «գերմաներեն լեզվի դարդերը», որոնց թարգմանության համար պահանջվում է լայնածավալ տեքստ⁹:

Խիստ կական են նաև գերմաներենի կառուցվածքի առանձնահատկությունները, նրա բառային կազմի հետ անմիջականորեն կապված փոխաբերականացման ուրույն, ազգային յուրահատկությունները: Այս առումով ուշադրավ է բառաբարդման երևույթը, որտեղ բառակազմական պրոցեսը (բարդ բառերն ամենից առաջ անհրաժեշտ է դիտել որպես բառակազմական մակարդակի միավորներ) սերտորեն միահյուսվում է ամբողջական բառի կամ նրա առանձին բաղադրամասերի փոխաբերական վերիմաստավորմանը: Այս երևույթի չափադանց լայն տարածումն ու զարգացումը, անկասկած, գերմաներենի, նրա բառային և քերականական կառուցվածքի բոլոր կողմերի համար կարևոր նշանակություն ունեցող ամենաբնորոշ առանձնահատկություններից է:

Մ. Դ. Ստեպանովան բարդ բառերը դասում է շարահյուսության հետ բավական քերտ կապի մեջ մտնող, գերմաներենի ընդհանուր սխտեմում որոշակի դաս կազմող, հատուկ տիպի բառային միավորների կարգին¹⁰:

XIV—XVI դդ. հասնելով նշանակալից զարգացման, բառաբարդումն այժմ էլ շարունակում է բուռն զարգացում ապրել՝ հարստանալով բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերությունների և իմաստաբանական բազմազան բնույթի կապերի նորանոր կառույցներով: Այսպես դարերի ընթացքում ստեղծվել է որոշակի համակարգ, որն օրինաչափություն դառնալով գերմաներենի համար օրգանապես ներաճել է նրա կառուցվածքում:

Հարցի պատմական լուսաբանմանը նվիրված ուսումնասիրություններում XVI դ. նշվում է որպես ժամանակակից լեզվին անցման շրջան: Հատկապես Վ. Մ. Պավլովը¹¹ կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե ինչպես էին XVII դ. գեղարվեստական գրականության մեջ աստիճանաբար մշակվում իրականության երևույթների՝ պատկերավոր փոխաբերական արտացոլման, բառաբարդման օգտագործմանը բնորոշ ոճական միջոցներ:

Փոխաբերությունը, բառաբարդման տարրերի համակցությամբ, կարողացավ ավելի բարձր մակարդակով և լեզվական ձևերի ծայրահեղ տնտեսամբ շոշափելի պատկերներ ստեղծել, իբրև արտահայտչականության արդյունավետ առկայացնող հանդես գալ հատկապես վերացական ըմբռնումների և նրանց կոնկրետացման բնագավառում: Եվ այս բոլորը զանազան գործընթացների և երևույթների առարկայացման ձգտմանը համապատասխան: Այսպես ծագեցին բարդագույն հասկացությունների պատկերավոր անվանումները՝ կապված ժողովրդի կուլտուրական զարգացման հետ:

⁹ A. Vurm-Stell, Die Frage nach den einwortigen Idioten. Sprachpflege, 1967, № 6.

¹⁰ М. Д. Степанова, Словообразование в современном немецком языке, Л., 1959 (докторская диссертация).

¹¹ В. М. Павлов, Развитие определительного сложного существительного в немецком языке («Ученые записки Ленинградского государственного педагогического института им. Герцена», Л., 1958, т. 190, ч. 2, стр. 63 и сл.).

Գերմաներենի բառաբարդման համակարգի առանձնահատկությունը, նրա արդյունավետությունը, ներուժակ հնարավորությունները նշել են շատ հետազոտողներ: Այսպես, օրինակ՝ Շ. Բալլին համեմատելով ֆրանսերեն և գերմաներեն լեզուները, նշում է գերմաներենի շարժուն բնույթը, որն ի հայտ է գալիս բարդ բառերի կազմության ժամանակ¹²:

Այնուամենայնիվ, դեռևս քիչ է ուշադրություն դարձվում ոճական կողմի վրա: Բարդ բառերում փոխաբերական պլանի առկայությունը հաշվի չի առնվում, մինչդեռ դրանցից շատերը փոխաբերությամբ են կառուցված: Այստեղից առաջանում է բարդ բառերում փոխաբերության ձևերի բազմազանության խնդիրը՝ որպես նրանց բնորոշ և ազգային ինքնատիպության հատկանիշ:

Բառաբարդման կաղապարների բազմազանության մեջ ամենաբնորոշ խումբը, որպես դեպի փոխաբերություն անցման փուլ, բարդ բառերն են, որոնց առաջին բաղադրիչը հանդիսանում է պատկերավոր համեմատության հիմքը: Ածականների ամենից ավելի բազմաքանակ և արդյունավետ խմբում (adjektivische Determinativkomposita) հանդես է գալիս գոյականը, որը մատնանշում է համեմատվող առարկան: Օրինակ՝ *felsenfest*, *pinnenwebfein*, *pechschwarz*, *bärenstark*: Իրենց մեջ ներառելով «թաքնված համեմատություն», այդ բառերը, համեմատություններից տարբերվում են իրենց հատուկ արտահայտչականությամբ, սուբյեկտիվ գնահատմամբ, սեղմությամբ: Փոքր-ինչ այլ կերպ են դասավորվում հարաբերությունները բարդ գոյականների խմբերում, որտեղ պատկերավոր համեմատության հիմքի վրա, հաճախ, փոխաբերաբար վերաիմաստավորված, ինչ-որ առանձնահատուկ գիծ է նշվում իբրև առարկայի կամ երևույթի մշտական կամ ոչ մշտական հատկանիշ, որն արտահայտվում է երկրորդ բաղադրիչով, *Staubrezen*, *Haubichlnase*:

Այս սկզբունքով են կառուցված բազմաթիվ համեմատական վերապրուկային բառեր, փոխաբերականության տարրերով բարդություններ, որոնք օգտագործվում են գերազանցապես առօրյա խոսակցական լեզվում: Սրանք նպաստում են պատկերավորությանը և հաղորդման հակիրձությանը, բայց հաճախ օգտագործվում են նաև գեղարվեստական գրականության մեջ, խոսքին հաղորդելով անմիջականություն, օրինակ՝ *Stelzvogelgang* („Der Wundertäter“):

Գերմաներենին չափազանց բնորոշ է ուժեղացնող բարդ բառերով բառաբարդման տիպը, որտեղ արտահայտչականությունն ստեղծվում է առաջին բաղադրիչի պարզորոշ արտահայտված ուժեղացնող իմաստով, որը երկրորդ բաղադրիչի իմաստը հասցնում է բարձր աստիճանի: Առանձնապես այդ տեղաշարժերը ակտիվ են ածականի համակարգում: Ավանդական համեմատությունների հիմքի վրա ծագել են եզակի «ժողովրդական գերադրականները», միաժամանակ տեղի է ունեցել առաջին բաղադրիչի վերածումը յուրատեսակ ուժեղացուցիչ ձևամասնիկի, ստանդարտ բառակազմական միջոցի: Ներքոհիշյալ օրինակներում *blutjung*, *blitzsauber*, *pudelnaz*, *himmelkuhn*, *giftgrün*, *krebsrot* և այլ բառերում, բառ-որոշիչը, համեմատվող առարկային համապատասխան, բարդ բառին հաղորդում է առավել կամ պակաս պատ-

¹² Ch. Bally. Linguistique generale et linguistique française. Berne, 1944, 2 Ed.

կերավոր պատճառաբանվածություն (արտահայտչականություն, հուզականություն): Այս ձևով են ծագել և շարունակում են առաջանալ գերադրական-երանգով օժտված շատ հոմանիշներ:

Ավելի որոշակի փոխաբերական բնույթ են կրում այն բարդ գոյականները, որտեղ առաջին բաղադրիչն աստիճանաբար «գունագրկվելով» կամ կորցնելով իր ինքնուրույն նշանակությունը ենթարկվել է վերաիմաստավորման: Դրանք ամենից առաջ զգացմունքների, զգացողությունների անվանումներն են. Wolishunger և նրա հոմանիշ Bärenhunger, որն օգտագործվում է որակի աստիճանի ուժեղացման համար:

Հետաքրքիր է նշել, որ միայն գերմաներենին բնորոշ բառ-ուժեղացուցիչների կողքին, ինչպես՝ Hölle-, Mord-, Aïe և այլն, նույն արտահայտչագոյական ֆունկցիաներով օգտագործվում են բառեր, որոնք թեև կառուցվածքով տարբեր են, սակայն իրենց արտահայտած իմաստով ընդհանուր են շատ լեզուների համար. օրինակ՝ Hundegeld «խղճուկ գրողներ», Hundeleben «շան կյանք», ֆր. un chien de temps «վատ եղանակ», vie de chien «շան կյանք», անգլ. dirty dog «անպիտան մարդ»: Կարելի է բերել նաև բնավորության գծեր նշող ուժեղացման այլ օրինակներ, սակայն այս դեպքում կիրառվում է համեմատության տարր Lammesgeduld «հրեշտակի համբերություն», որտեղ առաջին բաղադրիչն արտահայտում է համբերության չափանիշ:

Հիշատակելով այս բնույթի բարդությունների փոխաբերականությունը, Ի. Ա. Շուկինան նշում է, որ նրանց մեջ, իբրև օրենք, բաղադրիչների զուգակցությամբ պատկեր չի առաջանում, թեև բարդությունը ձեռք է բերում լեզվականություն և արտահայտչականություն¹³: Սակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Առաջին բաղադրիչի իմաստային նշանակությունը, թեև ընդհանրացված, այնուամենայնիվ առանձին դեպքերում կապակցությանը տալիս է բնորոշ ակնառություն, կոնկրետություն, առարկայի մասին ունեցած պատկերացմանը համապատասխան նրա հատկանիշի ակնառության հիմքում ընկնում են պատկերավոր զուգորդումները. օրինակ, Heide(n)larm-, -angst շարքում Heide բառի հետ «հեթանոս» զուգորդվում է ինչ-որ տհաճ, վատ երևույթի պատկերացում («...die Vorstellung von etwas schrecklichen, die sich in der Volksphantasie an das Wort knüpft. H. Paul):

Փոխաբերության ազգային ինքնատիպությունը ուսումնասիրելու և բառաբարդման շրջանակներում այն բացահայտելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ դիմել որոշիչ բարդ գոյականներին (Determinativkomposita), առավել բազմաքանակ և արդյունավետ բարդություններին (լեզվում և խոսքում), որոնց շարքն են դասվում նաև ուժեղացուցիչ գոյականակերտ բարդությունները:

Իմաստաբանական-կառուցվածքային ձևերի և տեսակների հարստությունը, այդ բարդություններին հատուկ բնորոշ հսկայական հնարավորությունները, ամենատարբեր բաղադրիչներից նոր լեզվական միավորներ ստեղծելու հնարավորությունը լայն ասպարեզ են բացում փոխաբերական իմաստափոխությունների համար: Ըստ բաղադրիչների իմաստա-շարահյուսական կապի բնույթի, բարդ բառերի մեջ տարբերակվում են բարդությունների հե-

¹³ И. А. Шуккина, К вопросу об образности и метафорическом переносе («Ученые записки Калининского педагогического института», т. XXV, Калинин, 1958, стр. 57).

տեղյալ տիպերը՝ համադասական (Kopulative), որոնց մեջ առաջին պլան է քաշվում կոորդինացման հարաբերությունը, և ստորադասական (Determinative): Քնդամին առաջինները էական դեր չեն խաղում պատկերավոր փոխաբերական համակարգի զարգացման և զործածության բնագավառում. գերմաներենում դրանք թույլ են զարգացած և հիմնականում օգտագործվում են որպես նոր առարկաների և երևույթների նշման միջոց:

Որակական և քանակական տեսակետից նշանակալից տեղ են զբաղում որոշիչ տիպի բարդությունները, որոնց մեջ առաջին բաղադրիչը ծառայում է որպես պատկերավոր համեմատության միջոց (Vergleichsbildungen)¹⁴. Դրանք ինչ-որ չափով մոտենում են ուժեղացնող բաղադրիչներին և Վ. Ֆլայշերն առաջադրում է դրանց սահմանադատման համար կիրառել նրանց փոխակերպման հնարավորությունները: Այսպես՝ Riesenkraft, Riesenflugzeug (wie ein Riese) նաև Blitzzug-gespräch (wie ein Blitz) այսինքն՝ գերակշռող են դառնում հետևյալ սեմերը՝ «խոշոր մեծություն» (առաջին դեպքում) և «արագություն»:

Սակայն նույն մոտեցումը չի կարելի հանդես բերել Riesenfreude տիպի բարդությունների նկատմամբ, ինչպես նաև՝ Atom-, Bomben-, Riesenerfolg: Կարող է լինել այսպիսի տարբերակ Kraftverkehrriesen: Առաջին բաղադրիչն այստեղ արդեն ունի կիսածանցի բնույթ և բաղադրիչների միջև եղած պատկերավոր համեմատությունը արդեն խամրել է:

Որոշիչ տիպի բարդությունների ողջ ենթահամակարգին անդրադառնալիս, անհրաժեշտ է հաշվի առնել առաջին բաղադրիչի հետ կատարվող փոփոխությունները, նրա սեմերի համակարգի տեղափոխությունը և ազդեցությունը ամբողջ խմբի վրա:

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ հիմնականում գործունենք երկու մոդելների հետ: Առաջին մոդելն է S+S, որտեղ առաջին բաղադրիչը ապագոյականացման է ենթարկվում, սլատառ դառնալով հետագա համապատասխան փոփոխությունների, ինչպես, օրինակ՝ անցումը շնչավոր առարկաների կարգից՝ անշունչ առարկաների կարգ և երկրորդ մոդելը՝ Adj.+S, որաեղ երկրորդ բաղադրիչի կադմի մեջ որակական ածականը փոխվում է հարաբերականի և ընդհակառակը: Դա արտահայտվում է առանձին անհատների կողմից ստեղծված բառերում, որոնց ստեղծման համար, սակայն, հեղինակը դիմում է լեզվում արդեն գոյություն ունեցող բառային միավորներին:

Մեր նպատակը չէ բարդ բառերի առանձնահատկությունների մանրամասն քննությունը, նրանց իմաստաբանական կապերի, բառաբարդման և բուռնացման տարբերության, ինչպես նաև՝ բարդ բառերի զարգացման հնարավորությունների լուսաբանումը, որն իր հիմքում ունի բարդ բառերի և շարահյուսական միացությունների փոխադարձ կապը և այլն: Մեզ հետաքրքրող տեսանկյունից (որի հիմքում ընկած է գերմաներենի փոխաբերության ազգային ինքնատիպությունը՝ կապված մեկ բառի մեջ երկու բաղադրիչների զուգորդման բնույթի հետ) որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բարդությունների միաձուլությունը, որը կայանում է միասնական հասկացության արտահայտման մեջ, ինչպես նաև դարձվածայնությունը, քանի որ նոր բար-

¹⁴ W. Fleischner, Wortbildung der deutschen Gegenwartssprache. Leipzig, 1969. S. 96, 223.

դոլթյան արտահայտած իմաստը նույնական չէ առանձին բաղադրիչների իմաստների դումարի հետ, այլ այն արտահայտում է որակական ինչ-որ նոր հասկացություն, ավելի արտահայտիչ, ավելի պատկերավոր, մեծ մասամբ շնորհիվ հենց փոխաբերական տարրի առկայության:

Այս հասկացությունները ցայտուն արտահայտվում են առանձնապես բարդ-ածանցավոր բառերում (հատկապես գոյականների համակարգում), որոնք գերմաներենի փոխաբերությանը հատուկ նրբերանգ են տալիս: Սեր-տաւումները (Zusammenbildungen) չափազանց տարողունակ են: Նույնիսկ կարճ ձևերով նրանք իրենց մեջ պարփակում են ընդարձակ բովանդակու-թյուն, աչքի են ընկնում իրենց սեղմությամբ, կոնկրետությամբ, տրամաբա-նական և արտահայտչական զուգորդումների անսպասելիությամբ և խիստ տարբերվում են որոշիչ տիպի բարդություններից: Նման բառերը դժվարու-թյամբ են թարգմանվում այլ լեզուներով, երբեմն անհրաժեշտ է լինում մի ամբողջ նախադասություն, որպեսզի ստույգ վերարտադրվի նրանց արտահայ-տած իմաստը: Դրանց մի մասը այլ լեզուների բառապաշարի մեջ մտել է անփոփոխ ձևով, օրինակ՝ Kulturträger:

Սկրտաճումները կազմում են նոր բառերի մի առանձին խումբ, որն անընդհատ համալրվում է: Կարելի է առանձնացնել նաև իմաստային առա-վել կամ ուղակա բաց խմբեր, որոնց մեջ կենտրոնական տեղ են զբաղում դեմք ցույց տվող բառերը: Ըստ որում այդ բարդությունների ճնշող մեծամաս-նությունը աչքի է ընկնում ցայտուն զգայականությամբ (հիմնականում բա-ցասական բնույթի):

Հատկանշական է, որ բարդ-ածանցավոր բառերի մի խումբ օգտա-գործվում է որպես նոր մասնագիտությունների և արտադրության գոր-ծիքների անվանում: Այստեղ պարզորոշ նկատվում է նրանց կապը շա-րահյուսական կապակցությունների հետ, որոնք ընկած են նրանց հիմքում՝ Scheinwerfer, Lautsprecher, Fernsprecher, Eisbrecher և այլն: Հիմնա-կանում, սակայն, այդ բառերը արտահայտիչ են գունագեղ բաղադրիչ-ներից մեկի, իսկ հաճախ ամբողջ միասնության պատկերավոր իմաստափոխ-ման շնորհիվ: Օրինակ՝ Leisetreter «խաղախ, խաբեբա», Pfästentreter «անբան», Klinkenputzer «մուրացկան», Feinschmecker ավելի բարդ է, քան «գուրման», սա իր մեջ պարունակում է ծաղրանքի, հեգնանքի երանգ, ինչպես նաև՝ Kulturträger «կուլտուրայի կրող»:

Ի տարբերություն բառաբարդման այլ տիպերի, նման բարդությունների օգտագործումը կապվում է ոճական որոշակի պայմանավորվածության հետ: Սրանք կարող են օգտագործվել որպես երգիծանքի միջոց և գործածվում են հրապարակախոսության ասպարեզում ու մամուլում, օրինակ՝ Phrasen- drescher, -macher «պոռոտախոս», «բացբերան», Drahtzieher «անդրկուլի- սային առաջնորդ», «ղրղող», կամ դրական բնութագիր տալու համար՝ Bahnbrecher «նորարար», Schrittmacher «նախաձեռնող»:

Խաղաղության համար մղվող շարժման հետ կապված ծագել են իմաս- տաբանական այն շարքերը, որոնք կազմված են այս մոդելով՝ Kriegshet- zer, Kriegspeitscher, -treiber, -brandstifter, Friedenbrecher, -störer:

Գեհհիկ-սանձարձակ առօրյա խոսակցական լեզուն ևս աչքի է ընկնում բարդ-ածանցյալ բառերի կիրառումով, որոնք օժտված են շեշտված բացա- սական երանգավորումով: Այդպիսի բառերը խոսքին հաղորդում են զգաց-

մունքային հագեցվածություն, արտահայտչականություն. օրինակ՝ Maul-drescher, -rüfereßer, Eisensfresser «պարծենկոտ», Schürzenjäger, Frauenfresser- «կնամուր» և, համապատասխանաբար, զավեշտական և զվարճալի նեոլոգիզմներ՝ Pillendreher «դեղագործ», Windmacher «դատարկաբան», Topflecker «պնակալեզ», Asphaltspucker «անբան»: Նման արտահայտիչ անուններին շատերը ծագել են «ուսանողական լեզվում». օրինակ՝ Grillenlänger, Stubenhocker, Kopfhänger և այլն, որոնց ոճական հնարավորություններն օգտագործվում են գրականության մեջ որպես որոշակի կենցաղային մթնոլորտ ստեղծելու միջոց կամ պատմողական վերամբարձ ոճը մեղմացնող տարր:

Բարդ-ածանցյալ բառերի մեծ մասը առաջացել է շարահյուսական կապակցություններից, որոնցում երկու բաղադրիչներն էլ արտահայտում են մեկ իմաստ և հանդես են դալիս գերազանցապես ոճական կապակցությունների ձևով:

Նրանց պատկերավորության հիմքում ընկած է իմաստային միավորների անսովոր կապակցությունը, հետևաբար նաև ամբողջի փոխաբերական հանրագումարը, կոնկրետության ամրացումը, որը նրանց հաղորդում է ածանցման տարր:

Գերմաներենում հետաքրքիր են որոշչային բարդ բառերը, որոնց հիմքում ընկած է փոխանվանական իմաստափոխությունը, և, որոնք լեզվում օգտագործվում են մարդկանց (նրանց արտաքին կամ մտավոր կարողությունների, հատկանիշների), կենդանիների, բույսերի, երբեմն էլ առարկաների (ըստ նրանց որոշակի կոնկրետ հատկանիշի) անվանման համար. օրինակ՝ Dumm-, Dickkopf: Սրանց մեջ այլևս բաղադրիչների որոշիչ կապ չի ընկալվում: Այդ բառերը զատվում են իրենց կառուցվածքային առանձնահատկություններով՝ առաջին բաղադրիչը ածական է, երկրորդ բաղադրիչը, լինելով գոյական անուն, կատարում է ածականի պաշտոն, բառը ամբողջությամբ վերցրած՝ ցույց է տալիս որակի կրողին: Այս տիպի բարդ բառերի առանձնահատկությունները դեռևս քիչ են ուսումնասիրված, թեև տարբեր երկրների գիտնականներ քանիցս անդրադարձել են այդ հարցին:

Անվիճելի է, սակայն, որ այդ բառերի մեծ մասը (առանձին բառեր օգտագործվում են օրինակ թռչունների, ծաղիկների և այլնի պատկերավոր անվանման համար) աչքի է ընկնում զգայական հագեցվածությամբ, արտահայտչականությամբ, որոնք ձեռք են բերվել նրանց առաջին բաղադրիչի փոխաբերական օգտագործման և ամբողջ կապակցության փոխանունության շնորհիվ. օրինակ՝ Grünschnabel, Grünhorn, Gelbschnabel «նորեկ», «ծծկեր», Flattergeist «թեթևասուլի»: Այս և նման մյուս օրինակներում փոխաբերությունը միանում է փոխնմանությանը, զուգորդական կապերի շնորհիվ բացահայտելով խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը դեպի դեմոստատ, դեպի գերազանցապես բացասական գնահատականը:

Խոսակցական գերմաներենը հատկապես հարուստ է «բահուլորիհի» տիպի բարդություններով, որոնք օգտագործվում են որպես նախատական բառեր և խոսքին տալիս են կոպիտ ժողովրդական երանգ. օրինակ՝ Pfeffer-, Feigen-, Kaffe-, Geldsack:

Դեռևս Լյուտերի մոտ հանդիպում ենք Geizhals «գծուծ», ավելի ուշ՝ Geizkragen: Նույն նշանակությամբ լայն տարածում են ստանում նաև այդ

կարգի այլ բարդություններ, որոնց արտահայտչականության հիմքում դարձյալ ընկած է փոխաբերական իմաստափոխությունը. օրինակ՝ Plauder-, Plapper-, Lügenmaul «շաղակրատ», Hasenfuß «վախկոտ», XIX դ. նաև «հիմար, անհեթեթ մարդ», Leichfuß «թեթևամիտ մարդ»։ Առաջացել է նաև հատուկ խումբ, որը ծառայում է որպես կենդանիների զավեշտական անվանման միջոց («rotwelsche Zoologie»), Langohr XIX դ. «ավանակ» իմաստով, հետագայում նաև՝ «նապաստակ» Breitfuß- «Gans», Langwedel- «Fuchs» և այլն։

Այսպիսով, գերմաներենի բառային կազմում գոյություն ունի զուտ ազգային պատկերավորություն (և նրա ստեղծման բառա-քերականական հատուկ միջոցներ), որի հիմքում ընկած է փոխաբերությունը։

Այդ պատկերավորությունը զարգացել և կատարելագործվել է տվյալ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի, հասարակական փորձի հետ։ Հետևաբար, այն բխում է լեզվական տվյալ կոլեկտիվի խոսքի արտահայտչականության և ակնառության նկատմամբ ունեցած ձգտումից։

ИНТЕРНАЦИОНАЛЬНОЕ И НАЦИОНАЛЬНОЕ В СЛОЖНЫХ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ МЕТАФОРИЧЕСКОГО ХАРАКТЕРА В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

И. Н. АРАКЕЛЯН

Р е з ю м е

В кругу вопросов, связанных с изучением немецкого словосложения, вопрос о соотношении интернациональных и национальных элементов относится к наименее изученным. Это в особенности касается субстантивных композитов, в которых словообразовательный процесс переплетается с метафорическим переосмыслением целостного слова или отдельных его компонентов.

Анализ имеющегося языкового материала и обзор литературы по данному вопросу позволяют с полным основанием предполагать наличие специфически национальной образности (и особых лексико-грамматических средств их воплощения), свойственной именно системе немецкого языка, его словарному составу и основанной на элементах метафоричности, которая находит свое воплощение в характерных для данного языка моделях словосложения. Значение образности развивалось и совершенствовалось в непосредственной связи с историей народа, его материальной и духовной культурой, общественной практикой, соответственно потребности языкового коллектива в выразительности, наглядности речи.